ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հուլիսի 28-31-ը Բելառուսի Հանրապետություն (Մինսկ) կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝
   Վարոս Սիմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

   ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ,

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

   Բելառուսի Հանրապետություն (Մինսկ), 2021թ. հուլիսի 28-31-ը

4. Հրավիրող կողմը՝

   Եվրասիական տնտեսական հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների եվ թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» Համաձայնագրի 13-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն Համաձայնագրի դրույթներին անդամ պետությունների կատարմանը ծանոթանալու նպատակով սկզբնական տեսչական այց և Բելառուսի Հանրապետության լիազոր մարմնի կողմից կատարված աշխատանքի գնահատում :

6. Քննարկված թեմաները՝

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում թանկարժեք մետաղների եվ թանկարժեք քարերի հետ գործառնությունների իրականացման առանձնահատկությունների մասին» Համաձայնագրի 3-րդ հավելվածով սահմանված պարտադիր պահանջներին գործող օրենսդրության համապատասխանությունը, գործնականում ոսկերչական իրերի հարգորոշման և հարգադրոշման աշխատանքների իրականացման կազմակերպման արդյունավետությունը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Տեսչական այցի ամփոփման նպատակով տեղի ունեցավ հանդիպում Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարար Յուրի Սելիվերստովի հետ: ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վարոս Սիմոնյանն իր ելույթում դրական գնահատեց կատարված աշխատանքները, միևնույն ժամանակ մատնանշելով օրենսդրական և նորմատիվային որոշ դրույթներ, որոնք դեռևս չեն համապատասխանում Համաձայնագրի պահանջներին և ենթակա են փոփոխման: Նախարար Յուրի Սելիվերստովը հավաստիացրեց, որ այդ աշխատանքներն ընթացքի մեջ են և կավարտվեն մինչև բոլոր անդամ պետություններում տեսչական այցերի ավարտը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Տեսչական այցի արդյունքով Բելառուսի Հանրապետության կողմից կատարված աշխատանքը գնահատվեց դրական:

9. Այլ տեղեկատվություն

Կազմակերպված մշակութային ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ այց «Փառքի բարձունք» հուշահամալիր, որտեղ Վարոս Սիմոնյանը ծաղկեպսակ դրեց՝ ի հարգանք Հայրենական մեծ պատերազմում հաղթողների:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

04.08.2021թ.